

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ. <<Ամասիայի առողջության կենտրոն >>ՓԲԸ
ՀԱՍՑԵ. Շիրակի մարզ գ.Ամասիա փ.2 N19
ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. ընկերությունը ինտերնետային կայք չունի
Էլեկտրոնային փոստ. amasiaak@mail.ru

1.Ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: Պետական բաժնեմասի կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Շիրակի մարզպետին:

2.ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

Ընկերությունը չունի Բաժնետերերի ընդհանուր ժողով, քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված է Շիրակի մարզպետին:

բ) Խորհուրդ

Ընկերությունը Խորհուրդ չի ստեղծել, քանի որ ունի մեկ բաժնետեր:

Հիմք՝ <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի հոդված 83, կետ 1 (բաժնետիրական ընկերություններում Խորհուրդ ստեղծվում է 50 և ավելի բաժնետերերի դեպքում):

գ) Խորհրդի հանձնաժողովներ

Ընկերությունը Խորհրդի հանձնաժողովներ չունի, քանի որ չունի նաև Խորհուրդ

դ) Գործադիր մարմին

Ընկերությունը չունի գործադիր մարմին, Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը, որը նշանակված ՀՀ Շիրակի մարզպետի կողմից:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են.

Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 101311211 (Հարյուր մեկ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր տասնմեկ) դրամ, որը բաղկացած է 51970291 բաժնետոմսից, որոնք կազմում են Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը:

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,9494 (Մեկ միլիոն) դրամ:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

Հաշվետու տարում Ընկերությունը չի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով, քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված է Շիրակի մարզպետին:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ընկերությունը չունի խորհուրդ, քանի որ բաժնետոմսերը 100% պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս լիազոր անձ՝ Շիրակի մարզպետի:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Ընկերությունը չունի հանձնաժողովներ, քանի որ չունի խորհուրդ: Ստեղծվել է ներքին աուդիտ ՀՀ Կառավարության 19 մայիսի 2005 թվականի N 1189-Ն որոշման համաձայն:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը գործադիր տնօրենն է:

Տնօրենը նշանակվել է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից՝ տնօրենի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթի արդյունքի հիման վրա:

Գործադիր տնօրեն՝ անուն, ազգանուն - Աննա Մկոյան

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ - 30 օգոստոսի 1973թ

Կրթություն՝- բարձրագույն մասնագիտական՝ ՀՀ հայկական բժշկական ինստիտուտ

Աշխատանքային փորձառություն՝ - 16 տարի

Հիմնական որակավորում՝- ընտանեկան բժիշկ

Ընկերությունում աշխատած տարիներ՝- 16 տարի

Անդամություն Ընկերության կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին-ոչ

Անձնական պարտականություններ և խնդիրներ:

Ընկերության տնօրենը՝

1.Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում ընկերության անունից

2.Ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում

3.Գործում է առանց լիազորագրի

4.Տալիս է լիազորագրեր

5.Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային

6.Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ

7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի մասին

8. Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատման է ներկայացնում Ընկերության կանոնակարգը, կանոնադրությունը, վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը

9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը

10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին

11. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

12. Իրավասու է իր հրամանով ստեղծել վարչական խորհուրդ

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության ներքին աուդիտի ֆունկցիաներն իրականացրել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժինը:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերությունը ընկերության կորպորատիվ քարտուղար չունի, քանի որ խորհուրդ ստեղծված չէ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2017 թվականին Ընկերությունում արտաքին աուդիտ չի իրականացվել:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

-- Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական մոնիթորինգի և շահաբաժնի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել է Շիրակի մարզպետարան, որպես 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն

-- 2017 թվականին Շահույթահարկի հաշվարկը ներկայացվել է՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

-- Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ Առողջապահության Նախարարության Պետական Առողջապահական Գործակալության Շիրակի տարածքային վարչություն և ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության և առողջապահության վարչություն:

Գործադիր տնօրեն

Աննա Մկոյան

16.04.2018